ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/95

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 24.12.2019թ.)

ՀՀ ոստիկանության լիազորված ներկայացուցիչ՝

Հ. Հարությունյանի (լիազորագիր տրված՝ 26.12.2019թ.)

Քննելով ՀՀ ոստիկանության կարիքների համար ճանապարհային գծանշումների ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված և 20.12.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/95 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 19.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ ճանապարհային գծանշումների ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

«ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի բացումը նշանակված է 20.12.2019թ.:

Համաձայն Ընթացակարգի հրավերի «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի համար սահմանվել են հետևյալ պարամետրերը.

«Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները.

- Բեռնատար ավտոմեքենա՝ նվազագույնը 4,
- Գծանշող սարքավորում՝ նվազագույնը 3,
- Մեքենա՝ նվազագույնը 1,

Գծանշման նվազագույնը 1 ապագծանշող սարքավորում, փոշեմաքրման համար նվազագույնը 3 սարքավորում:

«Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ որակավորում ունեցող աշխատանքային ռեսուրսները.

- Գծանշման բաժնի պետ՝ նվազագույնը 1 անձ,
- Խմբի աշխատանքային ղեկավար՝ նվազագույնը 4 անձ,
- Ներկարար-վարորդ՝ նվազագույնը 4 անձ,
- Գծանշման մեքենասարքավորման մասնագետ՝ նվազագույնը 5 անձ,
- Ներկարար՝ նվազագույնը 6 անձ:

Ընկերությունը վկայակոչել է բողոքի հետևյալ իրավական հիմքերն և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը…:

Ընկերությունը գտնում է, որ «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի կողմից հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել Օրենքի վերոշարադրված պահանջների խախտումներ:

Մասնավորապես, Ընթացակարգի հրավերով սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշով պահանջվում է թվով 4 բեռնատար ավտոմեքենա՝ մինչդեռ ներկի յուրաքանչյուր չափաբաժնի կշիռը առավելագույնը կազմում է 60 կիլոգրամ, և որ ամենակարևորն է ներկեր մատակարարող մատակարարները ներկերը մատակարարում են իրենց միջոցով, այս պարագայում հարց է առաջանում ինչի համար է դրվել այս պարամետրը, որը ուղղակի ստեղծում մի իրավիճակ, որ այլ Ընկերություններ, որոնք օրինակ չունեն 4 բեռանատար այլ օրինակ 2 բեռանատար մեքենա անհիմն զրկվում են հայտ ներկայացնելու իրենց վերապահված իրավունքից:

Ընթացակարգի հրավերով սահմանված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով պահանջվում է, որ խմբի աշխատանքային ղեկավարների քանակը պետք է լինեն նվազագույնը 4 անձ, ներկարար-վարորդների քանակը՝ նվազագույնը 4 անձ, իսկ գծանշման մեքենասարքավորման մասնագետների քանակը՝ նվազագույնը 5 անձ:

Այս դեպքում նորից անհասկանալի է Պատվիրատուի կողմից պահանջվող չափորոշիչները՝ աշխատողների քանակի հետ կապված, քանի որ չհիմնավորված է թե ճանապարհային գծանշումների ծառայությունների իրականացմանն ինչ նպաստ են բերելու օրինակ 4 աշխատանքային խմբի ղեկավարները՝ եթե հրավերով սահմանված աշխատանքները՝ հնարավոր է իրականացնել նույնիսկ 1 խմբի ղեկավարի միջոցով,

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ընկերությունը հայտնել է, որ հաշվի առնելով, որ Ընթացակարգի հայտերի ներկայացման ժամկետը դեռևս ավարտված չէ, իսկ Հրավերը հակասում է Օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին, ուստի ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության պահանջներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ «Ճանապարհային գծանշումների ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Ի լրումն ներկայացված բողոքի Ընկերությունը հայտնել է, որ բացի վերը նշվածից, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների այլ խախտումներ, մասնավորապես.

Համաձայն Ընթացակարգի հրավերի 3.1 կետի համաձայն՝ Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը հրապարակվում է համակարգում և www.procurement.am հասցեով գործող տեղեկագրի (այսուհետ՝ տեղեկագիր) «Գնումների հայտարարություններ» բաժնի «Հրավերների պարզաբանումների վերաբերյալ հայտարարություններ» ենթաբաժնում՝ առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

Վերը նշված հանգամանքների հետ կապված «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն օգտվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով և Ընթացակարգի հրավերով իրեն վերապահված իրավունքից՝ 13.12.2019թ. օրենքով սահմանված կարգով և ժամկետում՝ համակարգի միջոցով գնահատող հանձնաժողովին է ներկայացրել թվով 3 հարցում-պարզաբանումներ/ համապատասխան ապացույցները՝ www.armeps.am համակարգից արված արտատպումները՝ առ այն, որ պարզաբանումներ պահանջելը հաջողությամբ բեռնվել է, ինչպես նաև պարզաբանման տեքստերը կցվում են/ ակնկալելով, որ գնահատող հանձնաժողովը ներկայացված հարցումների վերաբերյալ հայտարարությունները կհրապարակի համակարգում և կներկայացնի նաև համապատասխան պարզաբանումները, որպիսի պայմաններում երևի թե այլևս հարկ չէր լինի մի շարք հարցերով բողոք ներկայացնել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Ընկերությունը խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուշադրություն դարձնել նաև այն հանագամանքի վրա, որ 13.12.2019թ. ուղարկված հարցում-պարզաբանումները նորից վերաբերվում են «Տեխնիկական միջոցներ», «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշներին, սակայն «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի անգործության հետևանքով վերը նշված հանգամանքերը Ընկերությունը ստիպված բողոքարկում է ՀՀ

գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/95 ծածկագրով բողոքի շրջանակներում:

Ընկերությունը հայտնել է, որ ելնելով 19.12.2019թ. «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/95 բողոքով և բողոքի լրացմամբ բերված փաստերից և փաստական հանգամանքներից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին կրկին խնդրում է «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/95 ծածկագրով բողոքը բավարարել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.04.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

<u>3. ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ ոստիկանությունը պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.12.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով առարկել է ներկայացված բողոքի դեմ՝ հայտնելով, որ «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով որևէ խտրական պահանջ չի դրվել, այլ նշվել է այնպիսի նվազագույն պահանջներ, որոնց առկայության պայմաններում հնարավոր կլինի մատուցել որակով ծառայություն: Վերջինս հայտնել է նաև, որ հաշվի առնելով այն փաստը, որ ճանապարհային գծանշումներ իրականացվելու են Երևան քաղաքի տարբեր փողոցներում, ուստի անհրաժեշտություն է առաջանում ունենալ թվով 4 բեռնատար ավտոմեքենա՝ ոչ միայն ներկերը գծանշման վայր տեղափոխելու, այլ նաև ճանապարհային նշանները և գծանշում կատարելու նպատակով օգտագործվող մեխանիզմները տեղափոխելու:

ՀՀ ոստիկանության ներկայացուցիչը հայտնել է, որ հրավերով սահմանված 4 աշխատանքային խմբի ղեկավարների պահանջը դրվել է կանոնակարգված աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/95 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2019/95 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կողմից կարիքների համար՝ ճանապարհային գծանշումների ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները,

- Բեռնատար ավտոմեքենա՝ նվազագույնը 4,
- Գծանշող սարքավորում՝ նվազագույնը 3,
- Մեքենա՝ նվազագույնը 1,
- Թերմոպլաստիկի համար նախատեսված նվազագույնը 2 մեքենասարքավորում և թերմոպլաստիկի տաքացման համար նախատեսված երկտեղանի կաթսա նվազագույնը
- 1սառը պլաստիկի համար նախատեսված սարքավորում՝ նվազագույնը 1
- Գծանշման նվազագույնը 1 ապագծանշող սարքավորում, փոշեմաքրման համար նվազագույնը 3 սարքավորում

3. Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ որակավորում ունեցող աշխատանքային ռեսուրսները.

- Գծանշման բաժնի պետ՝ նվազագույնը 1 անձ,
- Խմբի աշխատանքային ղեկավար՝ նվազագույնը 4 անձ,
- Ներկարար-վարորդ՝ նվազագույնը 4 անձ,
- Գծանշման մեքենասարքավորման մասնագետ՝ նվազագույնը 5 անձ,

• Ներկարար՝ նվազագույնը 6 անձ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. բողոքը և ի լրումն բողոքի գրությունը, ՀՀ ոստիկանության դիրքորոշումը, «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվողաշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-4-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանութ-յանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայութ-յան դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 62-րդ կետի 1-2-րդ ենթակետերի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա առաջին տեղը զբաղեցրած

մասնակիցը որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 64-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավո-րումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանա-կահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5

1.				
2.				
..				

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ ոստիկանության կողմից կարիքների համար՝ ճանապարհային գծանշումների ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.4-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ որակավորում ունեցող աշխատանքային ռեսուրսները.

- Գծանշման բաժնի պետ՝ նվազագույնը 1 անձ,
- Խմբի աշխատանքային ղեկավար՝ նվազագույնը 4 անձ,
- Ներկարար-վարորդ՝ նվազագույնը 4 անձ,
- Գծանշման մեքենասարքավորման մասնագետ՝ նվազագույնը 5 անձ,
- Ներկարար՝ նվազագույնը 6 անձ:

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն բողոքով նշել է, որ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի համար պահանջվող 4 աշխատանքային խմբի ղեկավարների նախատեսումն արհեստական խոչընդոտներ է ստեղծում մրցակցության համար, քանի որ հրավերով սահմանված աշխատանքները՝ հնարավոր է իրականացնել նույնիսկ 1 խմբի ղեկավարի միջոցով:

Այս տեսանկյունից գտնում եմ, որ Ընկերության նման պնդումն անհիմն է, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Միևնույն ժամանակ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 64-րդ կետով նախատեսված է, որ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատման համար հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին, իսկ եթե ***հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ,*** ապա՝ հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները նույն կետով նախատեսված ձևով:

Նշված նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնակցի համար «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով հրավերով կարող են նախատեսվել համապատասխան պահանջներ, որոնց գնահատման կարգը նախատեսվում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով, ինչպես նաև հրավերով: Ընդ որում՝ Ընկերության կողմից վկայակոչված փաստարկների շրջանակներում որևէ սահմանափակում նախատեսված չէ հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի հետ կապված՝ այդ թվում նաև քանակական, սահմանելու համար: Ինչ վերաբերում է սահմանված քանակական պահանջի խտրական լինելու վերաբերյալ Ընկերության պնդմանը, գտնում եմ, որ նման պնդումն անհիմն է, քանի որ նշված պահանջը Պատվիրատուի կողմից նախատեսվել է ըստ վերջինիս կարիքի և կանոնակարգված աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, որը որևէ կերպով չի խոչընդոտում մասնակիցների՝

տվյալ գնման գործընթացին մասնակցելու իրավունքի իրացմանը և չի հանդիսանում խտրական պահանջ:

Ուստի գտնում եմ, որ սույն մասով «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները,

- Բեռնատար ավտոմեքենա՝ նվազագույնը 4,
- Գծանշող սարքավորում՝ նվազագույնը 3,
- Մեքենա՝ նվազագույնը 1,
- Թերմոպլաստիկի համար նախատեսված նվազագույնը 2 մեքենասարքավորում և թերմոպլաստիկի տաքացման համար նախատեսված երկտեղանի կաթսա նվազագույնը
- 1սառը պլաստիկի համար նախատեսված սարքավորում՝ նվազագույնը 1
- Գծանշման նվազագույնը 1 ապագծանշող սարքավորում, փոշեմաքրման համար նվազագույնը 3 սարքավորում

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն բողոքով նշել է, որ Ընթացակարգի հրավերով սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշով պահանջվում է թվով 4 բեռնատար ավտոմեքենա, որը ուղղակի ստեղծում մի իրավիճակ, որ այլ Ընկերություններ, որոնք օրինակ չունեն 4 բեռանատար այլ օրինակ 2 բեռանատար մեքենա անհիմն զրկվում են հայտ ներկայացնելու իրենց վերապահված իրավունքից:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ ոստիկանության ներկայացուցիչը ԳԲՔԱ-ՆԳ-2019/95 բողոքի քննության շրջանակներում հայտնել է, որ հաշվի առնելով այն փաստը, որ ճանապարհային գծանշումներ իրականացվելու են Երևան քաղաքի տարբեր փողոցներում, ուստի անհրաժեշտություն է առաջանում ունենալ թվով 4 բեռնատար ավտոմեքենա՝ ոչ միայն ներկերը գծանշման վայր տեղափոխելու, այլ նաև՝ ճանապարհային նշանները և գծանշում կատարելու նպատակով օգտագործվող մեխանիզմները տեղափոխելու:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը…:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին ներկայացվող պահանջները՝ գտնում եմ, որ այն չի կարող դիտարկվել որպես խտրական, քանի որ չի հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, այլ ուղղված է ճանապարհային գծանշման ծառայությունների առավել արդյունավետ և ժամանակին իրականացնելուն և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, քանի որ այն կազմակերպվում է պետության կարիքների համար, որոնք անհետաձգելի բնույթ են կրում:

Ինչ վերաբերվում է Ընկերության կողմից ներկայացված այն դիտարկմանը, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն 13.12.2019թ. օրենքով սահմանված կարգով և ժամկետում՝ համակարգի միջոցով գնահատող հանձնաժողովին է ներկայացրել թվով 3 հարցում-պարզաբանումներ, որոնք վերաբերվում են «Տեխնիկական միջոցներ», «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշներին, սակայն «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի անգործության հետևանքով վերը նշված հանգամանքերը Ընկերությունը ստիպված բողոքարկում է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, ապա այս տեսանկյունից գտնում եմ, որ Ընկերության նման պնդումն անհիմն է, քանի որ արձանագրում եմ, որ «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացվել է միայն մեկ պարզաբանման պահանջ, իսկ մյուս երկուսը վերաբերվում են ոչ թե վեճի առարկա հանդիսացող ընթացակարգին, այլ՝ ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպված այլ ընթացակարգերին, որոնք սույն բողոքով առարկա չեն հանդիսանում:

Միաժամանակ ուսումնասիրելով Ընկերության կողմից «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում 13.12.2019թ. ներկայացված հրավերի պարզաբանման պահանջն, արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Այսպիսով՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Ընկերության կողմից 13.12.2019թ. ներկայացված հրավերի պարզաբանումը վերաբերվում է ոչ թե Ընթացակարգի հրավերով սահմանված այս կամ այն պահանջի պարզաբանմանը, այլ վերաբերվում է «Տեխնիկական միջոցներ» և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշների մասով արդեն իսկ սահմանված հստակ պահանջները նախատեսելու նպատակահարմարության հարցին:

Ուստի գտնում եմ, որ վերը նշված հանգամանքը «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19» ծածկագրով հրատապ բաց մրցույթը չկայացած հայտարարելու բավարար հիմք չի կարող հանդիսանալ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**